

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու
պատմություն» առարկայի
Հարապետական փուլ
10-րդ դասարան - 120 րոպե

№ 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 X 4 = 2 միավոր)

1. Ո՞ր առաքյալն է Ավետարանում հիշատակվում Նաթանայել անունով՝
(0,5 միավոր)

- 1) Թադեոս
- 2) Հովհաննես
- 3) Բարդուղիմեոս
- 4) Մատթեոս

2. Դվինի երկրորդ ժողովը գումարվել է՝ **(0,5 միավոր)**

- 1) 506 թ.
- 2) 516 թ.
- 3) 544 թ.
- 4) 554 թ.

3. Ե՞րբ Սմբատ Արծրունին Աղթամարում հանդիսավորությանը օծվեց Հայոց
թագավոր՝ **(0,5 միավոր)**

- 1) 1446 թ.
- 2) 1465 թ.
- 3) 1471 թ.
- 4) 1478 թ.

4. 1947 թ. ո՞ր քաղաքում գումարվեց Հայկական համաշխարհային կոնգրեսը՝
(0,5 միավոր)

- 1) Նյու Յորք
- 2) Ստրասբուրգ
- 3) Լոս Անջելես
- 4) Փարիզ

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ
(1 X 4 = 4 միավոր)

5. Վաղարշապատում կառուցված Մայր տաճարը 303 թ. օգոստոսին օծվում և
անվանակոչվում է՝ **(1 միավոր)**

:

6. 9-րդ դարի կեսերին պավլիկյան շարժման դեմ պայքարում աչքի է ընկնում
բյուզանդական

_____ կայսրուհին:

(1 միավոր)

7. 1361 թ. _____
 կաթողիկոսը հրավիրեց եկեղեցական ժողով, որը չեղյալ հայտարարեց Սսի և Ադանայի նախկին ժողովների որոշումները: (1 միավոր)

8. «Ինչպես գիտեք, ես իմ տկար ուժերով 130-րդ Հայոց կաթողիկոսն եմ...»:

Հայոց ո՞ր հայրապետի խոսքն է բերված այստեղ: (1 միավոր)
 _____:

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5-7 փաստից

9. Իրադարձությունը համապատասխանեցնել ժամանակի Հայոց կաթողիկոսի անվանը. (1 միավոր)

1. Աբրահամ Գ Կրետացի
2. Նահապետ Ա Եդեսացի
3. Եղիազար Ա Այնթապիցի
4. Ղուկաս Ա Կարնեցի
5. Մովսես Գ Տաթևացի
6. Սիմեոն Ա Երևանցի

1	
2	
3	
4	
5	
6	

- ա) Շահ Աբասից ստանալով Ս. Էջմիածնի վանքը նորոգելու թույլտվություն՝ նա վերանորոգում է վանքը, վեհարանը, կառուցում Մայր տաճարի գմբեթը, շրջապարիսպը, Երևանի Ս. Չորավոր եկեղեցին:
- բ) Իր տասնամյա գործունեության ընթացքում Հայոց կաթողիկոսը նորոգեց բազմաթիվ եկեղեցիներ, կառուցեց Մայր տաճարի իջման Ս. Սեդանը և երկու խորանները:
- գ) Նադիր շահի թագադրության արարողության ժամանակ Հայոց կաթողիկոսը նրա մեջքին կապել է շահական իշխանության խորհրդանիշ սուրը:
- դ) Նրա օրոք են կառուցվել Վաղարշապատի Ս. Շողակաթ եկեղեցին, Երևանում Կոնդի և Բանաքեռի եկեղեցիները:
- ե) Մեծ ջանքերի գնով նա հաստատեց կաթողիկոսական միանձնյա իշխանություն, վերականգնեց Էջմիածնի կաթողիկոսության իրավունքը Ռուսաստանի հայոց թեմի նկատմամբ:
- զ) Մայր Աթոռում 1782 թ. հրավիրվեց գաղտնի խորհրդաժողով, որը դիմեց Եկատերինա II կայսրուհուն՝ խնդրելով նրա հովանավորությունը:
- է) Կատարելով Հայոց կաթողիկոսի հանձնարարությունը՝ Աբգար դպիր Թոխաթեցին Վենետիկում տպագրում է «Օրացույց» և «Սաղմոսարան» գրքերը:

10. Համապատասխանեցնել իրադարձությունը և տարեթիվը. (1 միավոր)

- 1) Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարքական աթոռի վերահաստատումը Չմմառի վանքում
- 2) Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերության երևանյան գրասենյակի բացումը
- 3) Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի հաստատությունների միավորումն ու միացյալ միաբանության ստեղծումը
- 4) Հռոմի Հովհաննես-Պողոս Բ պապի այցելությունը Հայաստան
- 5) Հայոց եկեղեցուն դավանակից Արևելյան եկեղեցիների խնդրանքը Գարեգին Ա կաթողիկոսին Էկումենիկ հարցերի հետ կապված միասնական տեսակետով հանդես գալու վերաբերյալ

- ա) 1996 թ.
- բ) 1997 թ.
- գ) 1931 թ.
- դ) 2000 թ.
- ե) 2001 թ.
- զ) 1991 թ.

1	
2	
3	
4	
5	

№ 11

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք

11. Կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման հաջորդականության. (1 միավոր)

- ա) Գրիգոր Թ Մուսաբեկյան
- բ) Մեսրոպ Ա Արտազեցի
- գ) Բասեղ Ա Անեցի
- դ) Խաչիկ Ա Արշարունեցի
- ե) Գրիգոր Դ Տղա
- զ) Կոստանդին Ա Բարձրբերդցի
- է) Հակոբ Բ Անավարզեցի

1	
2	
3	
4	
5	
6	
7	

№ 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին:

«Հայերին արգելելով Թուրքիայից դուրս վաստակ որոնելը և միաժամանակ թույլ չտալով իրենց զավակների մոտ վերադառնալ նրանց, ում որ հաջողվել էր փրկվել կոտորածից՝ կառավարությունը արհեստականորեն և սիստեմատիկաբար նպաստում է հայ ժողովրդի բարոյալքմանը, սովահարությանը և բնաջնջմանը, մի ժողովուրդ, որը միշտ եղել է համբերության և աշխատասիրության օրինակ»:

1. Ո՞ւմ նամակից է մեջբերված հատվածը:

_____ (1 միավոր)

2. Ո՞ւմ է ուղղված նամակը:

_____ (1 միավոր)

13. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցին:

« ... Ահավասիկ չորս հիմնական ճշմարտություններ՝ Եկեղեցի, Հայրենիք, Լեզու և Հայ Պատ: Բոլորս պետք է այս չորսին մեջ միանանք և այս չորսով ամրանանք, որպեսզի կարենանք աշխարհին փաստել, որ մեր թշնամիին խաղը ձախողած է»:

1. Հայոց ո՞ր կաթողիկոսի պատգամն է բերված այստեղ:

(1 միավոր)

№ 14-15

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ

14. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին: (0,5 x 2 = 1 միավոր)

14.1. Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոն, Շողակաթի տոն, Սուրբ Խաչի տոն

14.2. Խաչիկ Բ Անեցի, Ներսես Դ Շնորհալի, Գրիգոր Բ Վկայասեր, Գրիգոր Գ Պահլավունի, Գրիգոր 2 Ապիրատ

15. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (1 x 3 = 3 միավոր)

15.1. (1 միավոր)

ա. Գրիգոր քահանա Ավագյան, Վարդան քահանա Նալբանդյան, Եղիշե քահանա Խաչատրյան

բ. Գրիգոր քահանա Ավագյան, Վարդան քահանա Նալբանդյան, Հակոբ քահանա Սառիկյան

գ. Գրիգոր քահանա Ավագյան, Ներսես վարդապետ Խարախանյան, Վարդան քահանա Նալբանդյան

15.2. (1 միավոր)

ա. Ս. Հովհաննեսի, Ստեփանոս Նախավկայի, Ս. Թեոդորոսի վանքեր

բ. Ս. Ստեփանոսի, Ս. Թեոդորոսի, Հառիճի վանքեր

գ. Ստեփանոս Նախավկայի, Ս. Թեոդորոսի, Հաղպատի վանքեր

15.3.

(1 միավոր)

ա. Գևորգ Բ Գառնեցի, Սարգիս Ա Սևանցի, Յովհաննես Ե Դրասխանակերտցի, Միքայել Ա Սեբաստացի

բ. Գևորգ Բ Գառնեցի, Յովհաննես Ե Դրասխանակերտցի, Ստեփանոս Դ Յոզմկլայեցի, Պողոս Ա Սսեցի

գ. Գևորգ Բ Գառնեցի, Յովհաննես Ե Դրասխանակերտցի, Ստեփանոս Դ Յոզմկլայեցի, Ստեփանոս Ե Սալմաստեցի

№ 16

Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից

16.1.



1. Ո՞վ է պատկերված նկարում:

(0,25 միավոր)

2. **Յայտց եկեղեցու և առհասարակ հայուլթյանը վերաբերող ի՞նչ կարևոր հարց բարձրացրեց նա պետության ղեկավարի առջև: (0,25 միավոր)**

16.2.



1. Ո՞վ է պատկերված նկարում:

(0,25 միավոր)

2. Հայոց կաթողիկոսը հատուկ կոնդակով ի՞նչ լիազորեց նրան:

(0,25 միավոր)

16.3.



1. Ո՞ր եկեղեցին է պատկերված նկարում: (0,25 միավոր)

2. Հոգևոր ո՞ր առաջնորդի նստավայրն է այն: (0,25 միավոր)

16.4.



1. Հայոց ո՞ր է կաթողիկոսն Է պատկերված նկարում: (0,25 միավոր)

2. Ո՞վ է հաջորդել նրան կաթողիկոսական աթոռին: (0,25 միավոր)

№ 17

Շարադրանք (2 միավոր)

1. Ներկայացրե՛ք Հայոց եկեղեցու ապաշխարության խորհուրդը. խորհրդի իմաստը, կարգը:
2. Ներկայացրե՛ք Գևորգ 2 Չորեքյան Ամենայն Հայոց կաթողիկոսի գործունեությունը:
3. Ներկայացրե՛ք Երուսաղեմի հայոց պատրիարքությունը որպես Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկը:
4. Ներկայացրե՛ք հույսը որպես քրիստոնեական բարոյականության հիմնական դրսևորում: